թէ միայն լրագրական լուրեր, այլ և հիւսիսամերիկեան պաշտօնական հաղորդութիւններ: Այդ հիւսիսամերիկեան թերութիւն են և անգլիական լրագրները:

«Քիւրդերի կատարած կողոպտութիւնները Հայաստանի մէջ, նոյնպէս և վատ վարչութեան այլ հեռանկարները, լրագրի կերպով նկատում է «Times» լրագրի թղթակիցը, այնպէս ապացուցված են, որ իւրաքանչիւր պաշտօնական փորձ նրանց ծածկելու մասին ապիրի է ապլիս կասկածելու, որ թիւրքաց կառավարութիւնը մտադիր չէ եւ ուներա միջոցներ գործադրել նրանց առաջն առնելու համար:»

Նախատեսելով, որ ամենքն վատերի լոի մերժելը բաւական չէ, Բ. Դու�Հայաստանի մէջ մոցնելի վերանորոգութիւնների դէմ մի ուրիշ նոյնքան ողորմելի ապիրի բերից հայերի բանակութեան մասին: Նա հաւատացնում է, որ Երզրումի, Վանի, Բիթլիսի և Դիարբեքիրի վիլայեթներում հայերը ամբողջ ազգաբնակութեան 17% են կազմում: Մի կողմ թողնելով այն հարցը, թէ ինչ յարաբերութիւն ունի այս ստատիստիկան խաբերայութիւնը Բերլինի դաշնագրի 61-դ յօդուածի հետ, որով Բ. Դուռը պարտաւորվում է անայցման տալ Հայաստանին վերանորոգութիւններ, առանց ուշադրութիւն դարձնելու քրիստոնեայ ազգաբնակութեան այս կամ այն քանակութեան վրա, թողնում ենք «Times» լրագրի անկողմնապահ թղթակցին հերքել այս ստատիստիկան:

«Մայր Տրստաների կատարած հետախուզութիւնները Երզրումի և Դիարբեքիրի վիլայեթների մէջ, ասում է նա, այն եզրակացութեան են հասցնում, որ հայերը թիվով աւելի շատ են քան թէ թիւրքերը և քիւրդերը առանձին առանձին վերցրած, թէկուա աւելի քիչ են, քան թէ այդ երկու ժողովուրդները միասին վերցրած: Դրանից մենք կարող ենք եզրակացնել, որ հայերը ամբողջ ազգաբնակութեան 33% աւելի են և 50% պակաս: Վանի և Բիթլիսի մէջ հայերի հարաբերութիւնը, արձանագրված ապրիլների հարաբերութեամբ, նոյնքան մեծ է, իսկ Սիվասի մէջ, որ հայոց վիլայեթ չէ համարվում, մի զորձին ծանօթ անձի վկայութեան համեմատ, որին դէպի հայերը կամ քրիստոնեաները կողմնապահ չէ կարելի համարել, հայերը ամբողջ ազգաբնակութեան 25% են կազմում:»

Իրական կողմից քննելով Բ. Դրան պատասխանը Հայաստանի մէջ մոցնելի վերանորոգութիւնների մասին, անկարելի է չը նկատել, որ թիւրքաց նախագիծը լի է անարգելութեամբ և այնպիսի հնարքներով, որոնց օգնութեամբ Բ. Դուռը միշտ կը կարողանայ Հայաստանը առաջվայ պէս անիշխանութեան բեմ դարձնել և բոլոր դիրքերը ոչնչացնել: Օրինակ, խնդրի գլխաւոր կողմի, վիլայեթներ վերանորոգութեան մասին Բ. Դուռը խոստանում է, որ տեղական վարչութեան ծախսերը ամենից առաջ կը ծածկվին նահանգի առաջ ուղղվի հարկերից և որ այդ եկամտի մնացորդի մի մասը կը պահվի բաւականութիւն տալու համար տեղական պահանջներին, օրինակ կրթութեան և հասարակական աշխատանքների համար: Այդպիսի վերանորոգութիւնը առանց ապահովութեան, առանց մասնագոյց լինելու հարկերը որոշելու ձևերի և հասարակական հսկողութեան վրա նրանց հաւաքելու և ծախսելու ժամանակ, նման է այն վերանորոգութիւններից մէկին, որոնցով Թիւրքիան մոլորեցնում էր Թիւրքաստէր լրագիրների միամիտ ընթերցողներին:

Վերանորոգութիւնների նախագծի մէս կէտերն էլ իրական կողմից սրա նման են: Քրէական գործերի համար երդվեալների դատարան է խոստացվում, բայց ոչինչ չէ ասվում դատարանի կազմակերպութեան և դատարանավարութեան մասին: Նոյնչափ անորոշ է և ժանդարմների հաւաքելու և կազմակերպութեան կէսը:

Անկախած Բ. Դրան հնարած վերանորոգութիւնների այս պակասութիւններ չեն ծածկվի Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւններից: Պէտք է յայտնի, որ պետութիւնների ներկայացուցիչները Կ. Պոլսի մէջ չեն ցանկանայ Թիւրքիայի գործիք դառնալ և արժանաւոր կերպով կը գնահատեն Բ. Դրան ձգտումը՝ վերանորոգութիւնների հարցը անմոլել կատակ դարձնել: Այսպէս թէ այնպէս Ռուսաստանի պատիւը և արժանապատուութիւնը պահանջում են, որ իր ամենապէս որդիներից պրիսնի գնով ձեռք բերված դաշնագրի պայմանները խստութեամբ և խիստութեամբ կատարվին: Նոյնը պահանջում են և ուրուս շահերը Արևելքի մէջ: Փորը Ասիայի քրիստոնեայ տարրը առհասարակ և մանաւանդ հայերը այդ երկիրների մէջ մեր միակ բնական դաշնակիցներ են, որոնց իրաւացի յոյսերը ներկայ գարձյ ընթացքում խաբված են և չեն իրագործված երեք անգամ, երեք պատերազմներից յետոյ: Մեր ուղղակի շահերը պահանջում են ապահովել հայերի վիճակը և վերջ դնել անիշխանական դրութեանը մեր ասիական սահմանի վրա:

ՄԻ ՔԱՆԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Թիւրքաց բազմազիմի հարստահարութիւնները, ինչքան որ առաջ կատարվում էին, զուտ արդիւնք էին բարբարոսութեան, որոնց դէմ կառավարութիւնը շատ անգամ արդէք էր գնում. բայց այժմ նա ստացել է մի ուրիշ կերպարանք—այն է քաղաքական:

Օրիցօր հայի գրկողութիւնը, ընչից յափշտակութիւնը, սպանութիւնը, հրդեհը, սովը, ծեղումը և սոցա պէս բիւրաւոր արկածները բարձրվում են և բազմացվում են, և դրանց բոլորի մէջ տեսնվում է Թիւրքիայի գաղտնի ձեռք: Այդ համր կուսի մէջ նա իր ձեռքում երկու գործիք ունի, մէնը՝ վայրենի և արիւնարբու քրդեր, որոնց օգնում է սուլթանի մասին նախատեսց Ալի փաշան, հեռացնելով նրանցից այն կոտորածը որ պէտք է գործ դրվէր նրանց վրա սուլթան Մէջիտի հրամանով,—միւսը՝ Փանատիկոս մոլլաները—զուրանի այդ մոլեռանդ սրբազնեները:

Թիւրքիային ախորժելի չէ Հայի արիւնալեղը, նրա ապահովութիւնը, հանգստութիւնը. նա ուզում է հայից ազատվել: Թէ ինչքան նրան ցանկալի է այդ բանի իրագործվելը, ցոյց կը տայ հետևեալը:

Բոլոր կատարվող յայտնի չարիքներից է բաց, Խարբերդի շրջակայքի հայերը, մի անգամ ելէջ մնաց, որ պիտի զոհ գնային մոլլաներից թելադրված մի գաւառրութեան, եթէ այդ պիսին օր առաջ չը յայտնվէր: Մոլլաները մեկ էին գնում տակ գաղտնի խորշերում և այնտեղից մեծ մարգարէի անունով հրամայում էին գնավորներին աշխարքի երեսից թեղադրված ինչել, առարկելով թէ Մուհամմէդ և Ասատան այդպես են կամենում: Այդ հրամէրը խլամների մէջ գտան պատշաճաւոր ընդունելութիւն, որովհետև նրանք գնային տակից եկող ձայնը վերին զօրութեան էին վերարերում, և մի առանձին զերբնական նշանակութիւն էին տալիս: Այդ դէպքը տեղի ունեց «Մշակի» 99 համարում յիշած գաղթականութեան շարժվելուն:

Այսպէս երբ ամեն տարի Բօսֆորի ափերը թնդում են հայոց սահմանադրութեան տարեդարձներով, նոր բարեներով, Հայաստանի օգն էլ թնդում է սրտաճմլիկ ողբագնչելով, մի տեղ քամում են շամպաեան, միւս տեղ արիւն:

Միւս կողմից նկատելի կէտն այն է, որ հայերի Եւրոպայի պաշտպանութեան դիմելը զրգռում է Թիւրքաց բարկութիւնը, պատճառ է տալիս նրանց բոլոր անբարեկանութիւններին: Թիւրքիան կրում է այն վատ անհՀամանմանութիւնը, որ իր ուժեղ հակառակորդին չը կարողանալով ընդդիմադրել, նրա վրէժն առնելու համար, ծեծում է և տրորում է իր անմեղ ընտանիքը:

Հայոց ինքնապարութեան խնդիրը աւելի խիստ բորբոքում է Թիւրքի կատաղութիւնը: Բայց զարմանալին այն է, որ հայերին թշուառաւորեանն անգամնը զլորելու ամենախիստ հարուածը պատրաստվում է ազգուրացների ձեռքով, որոնց շարքը երկուսով ևս աւելացաւ... որքան սարսափելի ոճիր է ընդհանուր ազգի կեանքը զոհել իր փառասիրութեանը:

Տեսնենք, սրանից յետոյ ինչ է սպասում հայերին:

Ե. Պ.

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

տաղը, ձեռք մեկնելն ու ձեռք սեղմելը չափված ու հաշված է, որովհետև մի մարդուն հաճի, ընթրիքի չեն հրաւիրի, եթէ զրանից մի չաղ չեն սպասում,—այդ տեսակ մարդիկ յանդգնում են ուրիշի չամանական նպատակների վրա խօսել:

Գ. Ե-ի մի մոտի հետ, մենք խոսակցվում ենք, թէ համաձայն ենք. նրա գաստղությունը թէ բոլոր քաղաքակիները թող միայն հեթանոսների մէջ քարոզեն և ոչ քրիստոնեաների, չատ ուղիղ է. Գ. Ե. երեի չէ մոռացել պատմութիւնը, մանաւանդ որ Ս. Պետերբուրգի ուսանող է եղել, որ Հուս, Լեգվին, Լուսիէր կաթոլիկների մէջ էին քարոզում. Բայց, ի հարկէ այն զարերի կաթոլիկները ինչպէս պ. Գ. Ե.-ին յայտնի է, ոչնչով չէին զանազանվում հեթանոսներից: Այսպանով թող բաւականանայ Գ. Ե.: Նրա գրուածքի ուրիշ կէտերին զալով, կասեմ որ ինչ որ նա կարող է գրել, մեզ չատ անգամ անհարմարն է լինում զրել: Հարկաւոր է քիչ թէ չատ ազնուութիւն ունենալ, պ. Գ. Ե., հասկանալու համար որ լինում են հանգամանքներ, երբ մի հարցին ուղիղ պատասխան տալ չէ կարելի:

Բայց չարտանակենք: Ինչ կը լինէր եթէ ես ձեզ ասէի ազ. Գ. Ե., ինչ հարկաւոր է որ զուսք գրէք յոդուածներ «Մեղուի» մէջ, կամ ինչ հարկաւոր է որ առհասարակ «Մեղուն» հրատարակվի, քանի որ «Մշակը» կայ. Գնացէք կաթոլիկների, Հօսէնսոյանների և Աֆրիկայի ուրիշ վայրերի տեղերի մէջ մոքեր յայտնեցէք, նրանք բոլորովին լրագիր չունեն, իսկ հայերը արդէն «Մշակը» ունեն»:

Գուցէ ինձ անուշ կը պատասխանէիք, որ ամեն մարդ հանգված է որ իր մոքը աւելի լաւ է, աւելի ուղիղ է և կը կամենար իր գաղափարները աւելի ընդարձակել:

Եւ ի հարկէ այդպէս անում են ամենքը: «Մեղուն» էլ, ինչպէս ուրիշները, ամեն միջոցներ է գործ դնում, որպէս զի իր թերթը, իր մոքերը, իր գաղափարները, իր վարդապետութիւնը աւելի և աւելի տարածվի:

Ինչ որ վերաբերվում է Գ. Ե-ի ասածին, թէ բողբաական հայերը անգարգացած, չը համոզված պրիկաչչիկներ են և նա բողբաական տալով ընդունում է միայն Շամախու հայ-բողբաականներին, մենք կը պատասխանենք հետևեալը:

Մեր խօսքը չէր միայն ռուսական հայ բողբաականների մասին կամ այն էլ Շամախու հայ բողբաականների մասին: Նրանք թէև Անդրկովկասում թիվով մինչև 4000 հոգի են, բայց մենք զրէխաբարակս խոսում ենք Թիւրքաց Հայաստանի հայ-բողբաականների մասին: Իսկ գիտէք, պ. Գ. Ե., որքան թիվով են նրանք Թիւրքաց Հայաստանում՝ մօտ 100,000 հոգի: Գուցէ չէք հաւանում—ասելիացէք՝ Ուրեմն, ինչպէս էք կարծում, ինչ պէտք է անէք 100.000 բողբաականների և նոյնպէս 200,000 կաթոլիկների հետ....պէտք է աքսորէք նրանց հայութիւնից, կամ զուցէ ձեր սրտած եզուխանները հետևելով պէտք է սրէք նրանց խարոյկի վրա.... Ոչ, պ. Գ. Ե. աւելի ազատամիտ է, նա յայտնում է հետևեալ երեսի մէջը «Քանի որ բողբաական և կաթոլիկ հայութիւնը արդէն իրողութիւն է դարձած, և նոցա մի մասը ցոյցեր է անում, որ կրօնը փոխելով, նա դարձեալ մնում է հայ ազգի անդամ, ի հարկէ նա դարձեալ մնում է հայ ազգի անդամ, ի հարկէ նոա պիտի վայելեն բոլոր ազգի համակրութիւնը նոքա պիտի վայելեն ամեն զարգացած հայից»

Եւ դա ասում է մի իրան ուսում առած ձեռնեղ իրաւաբան, համալսարանական մարդ և ոչ թէ մի կիներ, մի մանրավաճառ, մի պարիկաչչիկ: Իրաւաբան Գ. Ե. չը գիտէ, որ իրաւաբանութեան քաղաքական և հասարակական գիտութեան մէջ ոչ ոք չէ խոսում սիրոյ և հաւասարութեան մասին: «Ինչ փոքր ինձ ձեր զարգակ սերը և համակրութիւնը կամ այդպիսի ասելիքներ ասելով, բայց գժբաղդութիւն ունենալով ծնված լինել կաթոլիկ, բողբաական կամ մահմեդական հայ ծնողներից, ես չեմ կարող ընտրված լինել, ինչքան էլ ցանկանամ ծառայել ազգիս, կ. Պոլսի ազգային ժողովի մէջ.—իսկ զուք կարող էք, որովհետև լուսաւորչական էք: Գուք կարող էք վանի կամ Էրզրումի հայոց զարդի մէջ զասաւորութիւն անել, տեսուչ նշանակվել, իսկ ես չեմ կարող, թէև գուցէ ձեզանից շատ և շատ գիտութիւն ունենամ»

Այդ միայն եզուխաներին է յատուկ՝ խուսափել բուն հարցից. Ձեզ հետ խոսում են իրաւունքի վրա, իսկ զուք ձեզ համոզված և բուն քրիստոնեայ ձևացնելով, սիրոյ և համակրութեան վրա էք խոսում:

Վերջացնում եմ հնարկայութիւնս յայտնելով պ. Գ. Ե-ին, որ այդքան բարի ու ներողամիտ է, որ ինձ մասնաւորապէս թոյլ է տալիս, եթէ կամենամ, կարող եմ կրօնափոխ լինել: Շնորհակալ եմ շատ այդ հնարի համար, ես այդ մասին պէտք էլ չունեմ, չը նայելով որ պ. Գ. Ե. պատրաստ է այդ դէպքում խանարվել իմ խղճմտանացվնի առջև....

Դա էլ մի լաւ եզուխութիւն է. նախ ասել, որ ես մինչև այն ասիճան մանուկ եմ, այն ասիճան անզարգացած մարդ եմ, որ կարող եմ միայն ուրիշի դարձիք լինել, իսկ յետոյ ասել որ խոնարհվում է իմ խղճի առջև, որպէս մի շատ զարգացած մարդու պատ քայլի առջև և պատրաստ է անում ինձ համամտանել մարիկը Բիսմարկի հետ:

Եզուխաները միշտ այսպէս են անում, մարդուց խօսքերը դուրս քաշելու համար, նախ վիրաւորում, ստորացնում են նրան, յետոյ ցանկացած շողորքումով, բարձրացնում են....

Իսկ ես իմ կողմից կարող եմ հաստատ ասել, որ եթէ Գ. Ե. իր կրօնը փոխի, ես երբէք չեմ խոնարհի նրա խղճմտանացվնի առջև, որովհետև համոզված եմ որ եթէ Գ. Ե. այդ քայլը կասէ այլադաւան հայը, երբ որ հայ լինելով, բայց զժբաղդութիւն ունենալով ծնված լինել կաթոլիկ, բողբաական կամ մահմեդական հայ ծնողներից, ես չեմ կարող ընտրված լինել, ինչքան էլ ցանկանամ ծառայել ազգիս, կ. Պոլսի ազգային ժողովի մէջ.—իսկ զուք կարող էք, որովհետև լուսաւորչական էք: Գուք կարող էք վանի կամ Էրզրումի հայոց զարդի մէջ զասաւորութիւն անել, տեսուչ նշանակվել, իսկ ես չեմ կարող, թէև գուցէ ձեզանից շատ և շատ գիտութիւն ունենամ»

Այդ միայն եզուխաներին է յատուկ՝ խուսափել բուն հարցից. Ձեզ հետ խոսում են իրաւունքի վրա, իսկ զուք ձեզ համոզված և բուն քրիստոնեայ ձևացնելով, սիրոյ և համակրութեան վրա էք խոսում:

Վերջացնում եմ հնարկայութիւնս յայտնելով պ. Գ. Ե-ին, որ այդքան բարի ու ներողամիտ է, որ ինձ մասնաւորապէս թոյլ է տալիս, եթէ կամենամ, կարող եմ կրօնափոխ լինել: Շնորհակալ եմ շատ այդ հնարի համար, ես այդ մասին պէտք էլ չունեմ, չը նայելով որ պ. Գ. Ե. պատրաստ է այդ դէպքում խանարվել իմ խղճմտանացվնի առջև....

Դա էլ մի լաւ եզուխութիւն է. նախ ասել, որ ես մինչև այն ասիճան մանուկ եմ, այն ասիճան անզարգացած մարդ եմ, որ կարող եմ միայն ուրիշի դարձիք լինել, իսկ յետոյ ասել որ խոնարհվում է իմ խղճի առջև, որպէս մի շատ զարգացած մարդու պատ քայլի առջև և պատրաստ է անում ինձ համամտանել մարիկը Բիսմարկի հետ:

Եզուխաները միշտ այսպէս են անում, մարդուց խօսքերը դուրս քաշելու համար, նախ վիրաւորում, ստորացնում են նրան, յետոյ ցանկացած շողորքումով, բարձրացնում են....

Իսկ ես իմ կողմից կարող եմ հաստատ ասել, որ եթէ Գ. Ե. իր կրօնը փոխի, ես երբէք չեմ խոնարհի նրա խղճմտանացվնի առջև, որովհետև համոզված եմ որ եթէ Գ. Ե. այդ քայլը արաւ, անպատճառ մի չամանական նպատակ պէտք է ունենայ իր աչքի առջև:

Գարձեալ մի խօսք՝ Դա մի տեսակ խարդախութիւն, եզուխութիւն չէ արդեօք, որ չը նայելով թէ մենք անխտիր համակրութեամբ խոսում ենք բոլոր այլադաւան հայերի մասին, ազգային տեսակէտից ոչ մինի մէջ խարութիւն չենք գնում՝ լինի նա կաթոլիկ, լուսաւորչական, բողբաական կամ մահմեդական,—պ. Գ. Ե. և «Մեղուն» ամբողջ ժամանակը չեչտում են բողբաականը բաւի վրա, ուշնատում են հաւատացնել իրանց ընթերցողներին, որ մենք առանձին համակրութիւն ունենք դէպի բողբաականները, դիտմամբ լռութեամբ անցնելով մահմեդական, կաթոլիկ և յունադաւան հայերին, որոնք բոլորն էլ բազմաթիւ են Թիւրքաց Հայաստանում: Ինչպէս անուանեմ եթէ ոչ անազնուութիւն, խարդախութիւն, եզուխութիւն՝ ազգային միութեան խնդրից դարձնել ոչ թէ միայն կրօնական խնդիր, բայց հաւատացնել մոլեռանդ ամբոխին որ, մենք կրօնափոխութիւն ենք քարոզում:

Բայց պ. պ. Սիմէոնեանց, Գ. Ե. և նրանց պէտքերը թող իմանան, որ անցան այն ժամանակները, երբ գրական խարդախութեամբ, գրական խաբէութեամբ, կարելի լինէր ժողովրդականութիւն ստանալ հասարակութեան մէջ: Կան, ի հարկէ, դեռ ես բազմաթիւ յիմարներ, բայց մեծամասնութիւնը արդէն բաւական զարգացել և արթնացել է: Ուրեմն վաղ թէ ուշ այդ տեսակ նենգութիւնները կը մերկացվեն,—այդ մասին թող ապահով լինեն պ. պ. Սիմէոնեանց, Գ. Ե. և ընկերութիւնը:

Ցնչեցեք իմ խօսքերը պարոններ. կը պատասխի դարձեալ որ մենք մի մեանց կրկին կը հանդիպենք. գուցէ այն ժամանակ մեր գործածած թնաքը այնքան թանձր չի լինի և մեր ձեռքում ունեցած զրիչներն էլ աւելի սուր կը լինեն:

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ